ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 2-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-24/20»

Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-24/20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2024 թվականի փետրվարի 1-ին ժամը 16:10:42-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2024 թվականի փետրվարի 2-ին ժամը 12:30-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1: Հարգելի պատվիրատու,
չնայած որ մրցույթը կազմակերպված է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիմքով, այնուամենայնիվ հրավերում առկա է 7-րդ գլուխը՝ հայտի ապահովում, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 4-րդ գլխի 4.3 ենթակետով և 2-րդ մասի 2-րդ կետի 2.4 ենթակետով պահանջվում է հայտի ապահովում:
Խնդրում եմ հաստատել, որ սույն ընթացակարգով հայտի ապահովում չի պահանջվում:

Պարզաբանում N 1: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-24/20» ծածկագրով հրավերի 1-ին մասի 3-րդ բաժնի 3.3 կետը՝ հանձնաժողովը գտնում է, որ հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից և հրավերի բովանդակություն բաժնի 2-րդ համարի, ինչպես նաև 1-ին մասի 7-րդ բաժնի գլխագրում նշված 10-րդ համարի տողատակերում հստակ ներկայացված են հայտի ապահովման ներկայացման դեպքերը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-24/20» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ (011) 818 529:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@env.am:

«ՇՄՆ-ԳՀ-ԾՁԲ-24/20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով